ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի հանրային մասնակցության բաղադրիչի վերաբերյալ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի հանրային մասնակցության բաղադրիչի վերաբերյալ

Սույն փաստաթուղթն ամփոփ ներկայացնում է ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցության ապահովմանն առնչվող խոստումները:

Ուսումնասիրության հիմքում ընկած են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում օրենքով սահմանված կարգով հրապարակված նախընտրական ծրագրերը:

2026 մայիսի 22-ի դրությամբ պարզվել է, որ 19 քաղաքական ուժերից միայն 10-ն ունեն նախընտրական ծրագիր: Դրանցից 7-ն են անդրադարձել հանրային մասնակցությանն առնչվող հարցերին:

Հանրային մասնակցության և քաղաքացիական հասարակության դերի վերաբերյալ մոտեցումները քաղաքական ուժերի մոտ տարբեր են: Թեև որոշ ծրագրերում շեշտվում է թափանցիկության և հաշվետվողականության կարևորությունը, քաղաքացիական հասարակության անմիջական մասնակցության, հանրային վերահսկողության կամ որոշումների կայացման գործընթացներում հասարակական կազմակերպությունների դերակատարության վերաբերյալ հստակ մեխանիզմները հիմնականում բացակայում են: Որոշ քաղաքական ուժերի ծրագրերում առկա են մոտեցումներ, որոնք կարող են հանգեցնել քաղաքացիական հասարակության ազդեցության նվազեցման կամ պետական որոշումների նկատմամբ հանրային վերահսկողության սահմանափակման:

Իրենց ծրագրերում քաղաքացիական հասարակության մասնակցությանն առնչվող դրույթներ ներառել են հետևյալ 7 քաղաքական ուժերը.

- «Ուժեղ Հայաստան» դաշինք, N 3
- «Միասնության թևեր» կուսակցություն, N 6
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, N 7
- «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն, N 10
- «Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն, N 14
- «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցություն N 15
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, N 16

«Ուժեղ Հայաստան» դաշինք (N 3)

Ծրագիրը (էջեր 50, 56) պարունակում է թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հանձնառություններ: Սակայն հանրային մասնակցության բաղադրիչը ծրագրում արտահայտված է հիմնականում անուղղակիորեն՝ թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների միջոցով, առանց ներկայացնելու քաղաքացիների կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների որոշումների կայացման գործընթացներում ներգրավման կոնկրետ ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

«Միասնության թևեր» կուսակցություն (N 6)

Ծրագրում (էջեր 8, 45) նախատեսվում է պետական կառավարման ոլորտում ապահովել հանրային լայն մասնակցություն, իսկ հանքարդյունաբերության ոլորտում՝ ներդնել խիստ բնապահպանական ստանդարտներ և հանրային վերահսկողություն: Ծրագրով նաև առաջարկվում է ապահովել բաց կառավարում՝ սփյուռքի մասնակցությամբ, և ստեղծել ինստիտուցիոնալ հարթակներ, որոնց միջոցով սփյուռքի կառույցներն ու անհատները կմասնակցեն ռազմավարական ծրագրերի քննարկմանն ու իրականացմանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (N 7)

Ծրագրում (էջ 6) շեշտադրվում է ներքին համերաշխության, հասարակական համախմբման և քաղաքացիական ազատությունների պաշտպանության կարևորությունը: Նախատեսվում է խթանել հանրային և քաղաքացիական համերաշխությունը, ամրապնդել ազատ կամարտահայտման և իրավունքների պաշտպանության երաշխիքները, ինչպես նաև ապահովել արդարադատության և իրավապաշտպանության ինստիտուտների գործունեությունը հանրային համերաշխության տրամաբանությամբ: Միաժամանակ, ծրագիրը պարունակում է հանրային մասնակցության և քաղաքացիական դաշտի հնարավոր սահմանափակման տարրեր: Մասնավորապես, ծրագիրը ներառում է մի դրույթ, ըստ որի՝ պետությունը պետք է կիրառի մտածված և համակարգված քայլեր՝ «ներքին թշնամությանն ու պառակտմանը ծառայող գործիքակազմի հայտնաբերման և չեզոքացման ուղղությամբ»: Թեև այս ձևակերպումը ներկայացվում է ազգային համերաշխության և անվտանգության համատեքստում, այն կարող է լայն մեկնաբանության հնարավորություն ստեղծել և հանգեցնել քննադատական կամ այլախոհ դիրքորոշումներ արտահայտող խմբերի, լրատվամիջոցների կամ հասարակական կազմակերպությունների գործունեության սահմանափակման ռիսկերի:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն (N 10)

Ծրագրում (էջ 14) նախատեսվում է կառավարության համագործակցություն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների հետ՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով: Սակայն քաղաքացիական հասարակության մասնակցությունը դիտարկվում է բացառապես հակակոռուպցիոն քաղաքականության համատեքստում, և ծրագրում չեն ներկայացվում որոշումների ընդունման գործընթացներում հանրային մասնակցության ապահովման ավելի լայն կամ ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (N 14)

Ծրագրում (էջեր 16, 17) նախատեսվում է պետական իշխանության լեգիտիմության ապահովում հասարակության հետ շարունակական շփման միջոցով: Միաժամանակ, ծրագիրը պարունակում է քաղաքացիական դաշտի հնարավոր նեղացման և հանրային մասնակցության սահմանափակման ռիսկեր: Մասնավորապես, ծրագրում առաջարկվում է սահմանափակել այլ պետությունների կողմից ֆինանսավորվող և նրանց շահերը սպասարկող ուժերի գործունեությունը:

«Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցություն (N 15)

Ծրագրում (էջ 14) նախատեսվում է քաղաքացիների ներգրավում ոստիկանության գործունեության վերահսկողության և գնահատման գործընթացներում՝ տարեկան բաց հաշվետվությունների, հանրային լսումների և քաղաքացիների գնահատման մեխանիզմների միջոցով: Սակայն նշված մեխանիզմները վերաբերում են բացառապես ոստիկանության գործունեության հաշվետվողականությանն ու գնահատմանը, և ծրագրում չեն ներկայացվում քաղաքացիների կամ քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման ավելի լայն կամ ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (N 16)

Ծրագրում (էջեր 3, 14) կարևորվում է քաղաքացիական հասարակության և գործարար համայնքի դերակատարությունը խաղաղության գործընթացներում, սակայն քաղաքացիական հասարակության ուղղակի ներգրավման կամ հանրային վերահսկողության առանձին մեխանիզմներ չի նախատեսվում: Միաժամանակ, ծրագրում ներառված է Հայ Առաքելական եկեղեցու «բարենորոգման» պետական օրակարգի վերաբերյալ դրույթ: Քանի որ կրոնական կազմակերպությունների ներքին կառավարման հարցերին պետական միջամտությունը կարող է առաջացնել սահմանադրական և մարդու իրավունքների հետ կապված հարցեր, այս դրույթը կարող է դիտարկվել որպես հասարակական ինքնակազմակերպման և ինստիտուցիոնալ ինքնավարության սահմանափակման ռիսկ պարունակող մոտեցում:

Ռեֆորմիստների կուսակցության, «Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցության, «Հանրապետություն» կուսակցության կողմից հրապարակված նախընտրական ծրագրերը չեն անդրադառնում հանրային մասնակցությանն առնչվող հարցերին:

Հետևյալ 9 կուսակցությունները ԿԸՀ առհասարակ չեն ներկայացրել նախընտրական ծրագիր.

- «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը
- Հայաստանի շնորհապետական կուսակցությունը
- «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը
- «Քոչարի ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» կուսակցությունը
- Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունը
- «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը
- «Հայաստան» կուսակցությունների դաշինքը

- «Հանուն հանրապետության» ժողովրդավարության պաշտպանների դաշինք կուսակցությունը
- «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը